ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025թ. նոյեմբերի 19-ից 20-ը Վրաստան կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Գևորգ Պապոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան՝ ք. Թբիլիսի, 2025թ. նոյեմբերի 19-ից 20-ը

4. Հրավիրող կողմը՝

Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Մարիամ Կվրիվիշվիլի

5. Գործուղման նպատակը՝

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության հետ կապված մի շարք օրակարգային և հրատապ հարցերի (այդ թվում՝ տարանցիկ բեռնափոխադրումների հետ կապված) քննարկման և լուծման ուղղությամբ քայլերի նախանշում

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները՝

- Տրանսպորտային և լոգիստիկ համագործակցության զարգացման և խորացման ուղղությունները,
- Վրաստանի տարածքով հայկական բեռների արագ և անխոչընդոտ անցման ապահովումը,
- Հայկական բրենդիի բաղադրության իզոտոպային փորձաքննության արդյունքների փոխադարձ ճանաչման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2025 թվականի նոյեմբերի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլիի, վարչապետ Իրակլի Կոբախիձեի և Վրաստանի խորհրդարանի խոսնակ Շալվա Պապուաշվիլիի հետ: Այցի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը և փոխնախարար Արման Խոջոյանը հանդիպում են ունեցել Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Մարիամ Կվրիվիշվիլիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են.

- համագործակցությունը տրանսպորտի և լոգիստիկայի ոլորտներում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ երկկողմ մակարդակներում,
- զբոսաշրջության և ներդրումների ոլորտներում գործընկերային կապերի ամրապնդման ուղղությունները,
- երկկողմ առևտրի ծավալների ավելացմանն ուղղված քայլերի իրականացման ընթացքը:

Բացի այդ, հանդիպման շրջանակներում քննարկվել են նաև ճանապարհային անվտանգության, շարժունակության, տրանսպորտային կառավարման բարելավման և նոր ավտոմոբիլային տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները: Նախարար Պապոյանը կարևորել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը տրանսպորտային համակարգերի արդիականացման ուղղությամբ:

Վրաստան կատարած այցի շրջանակներում քննարկվել է 2025թ. հոկտեմբերի 22-ից Վրաստանի մաքսային ծառայության կողմից հայկական բեռներ, այդ թվում՝ հայկական բրենդի տեղափոխող բեռնատարների՝ Վրաստանի մաքսային տերմինալում կանգնեցման խնդիրը, և հայկական կողմից նշվել է, որ դրա հետևանքով առևտրային ցանցերը սկսում են խուսափել ՀՀ տնտեսավարողների հետ մատակարարման պայմանագրեր կնքելուց:

Աշխատանքային հանդիպում է տեղի ունեցել նաև Վրաստանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի նախարար Դավիթ Սոնգուլաշվիլիի հետ: Քննարկվել են հայկական բրենդիով բեռնված ավտոմեքենաների Վրաստանի տարածքում լաբորատոր ստուգումների գործընթացի արագ կազմակերպման, ինչպես նաև հայկական բրենդիի բաղադրության իզոտոպային փորձաքննության արդյունքների փոխադարձ ճանաչման հետ կապված հարցերը:
Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել սննդի անվտանգության, խաղողագործության և գինեգործության, ինչպես նաև գյուղատնտեսության այլ ոլորտներում երկկողմ համագործակցության զարգացման հնարավորություններին, այդ թվում՝ առևտրատնտեսական հարաբերությունների խորացման հեռանկարներին:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

25.11.2025

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ Նախագահի N ՆԿ-46-Ա կարգադրություն առ 14.11.2025թ. և ՀՀ վարչապետի N 1051-Ա որոշում առ 19.11.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի նոյեմբերի 19-20-ը**

5. Գործուղման վայրը՝ **Վրաստան (Թբիլիսի)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

_____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար (Վրաստան-Թբիլիսի - USD)		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)	-	
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Վրաստան-Թբիլիսի - USD)	74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28,229	
	Օրերի քանակը (19, 20 -նոյեմբեր- 2025թ.)	2	
	Ընդամենը (դրամ)	**56,458**	**56,458**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր		
Ընդամենը ծախսեր (դրամ)		**56,458**	**56,458**

*19.11.2025թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեքը 1 USD 381.47

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ *Մոնիկա Ղարսյան*